ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
18 ապրիլի 2025 թվական, N 48-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՆՈՂ ԳՅՈՒՂ, 1-ԻՆ ՓՈՂՈՑ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ՝ 0.18334 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին կետի 2) ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21) ենթակետով, 35-րդ հոդվածի 1-ին կետի 16) և 18) ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման կարգի 14-րդ կետի ա) ենթակետով, 38-րդ կետի ա) ենթակետով, հիմք ընդունելով համայնքի սեփականության իրավունքի N 03022017-06-0029 վկայականը, ՀՀ Լոռու մարզի «Ալավերդի համայնքի «ՀԵՔԻԼԹ» մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի պետական ռեգիստրի վկայականը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնք Ալավերդի, Շնող գյուղ, 1-ին փողոց, 7 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած՝ 0.18334 հեկտար մակերեսով, կադաստրային 06-088-0081-0005 ծածկագրով հողամասը (սեփականության իրավունքը գրանցման վկայական N 03022017-06-0029) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՀ Լոռու մարզի «Ալավերդի համայնքի «ՀԵՔԻԼԹ» մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Հանձնարարել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կազմակերպել անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման աշխատանքները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ (17) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ
ԼՈՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՂՈՒԼՅԱՆ

ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ
ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ
ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ
ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ
ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ
ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ՍԻՄՈՆ	ՁԱԽԱՐՈՎ
ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ
ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ
ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2025թ., ապրիլի 18,
Լոռու մարզ, ք. Ալավերդի